Հաստատված է

<<Գավառի պետական բժշկական քոլեջ >>ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նիստում

28 ----------10---------- 2022թ

Արձանագրություն № 3

Խորհրդի նախագահի------------------ Գ. Սողոմոնյան

<<ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Որակի ապահովման ստորաբաժանման նպատակն է Քոլեջի կրթության որակի գնահատման և ապահովման համակարգի և դրան վերաբերող փաստաթղթային փաթեթների մշակումը,կատարելագործումը և ներդրումը, ինչպես նաև ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացների իրականացման համակարգումը,որակի գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության ապահովումը:

2.<<Գավառի պետական բժշկական քոլեջ>> ՊՈԱԿ /այսուհետ՝ Քոլեջ/ որակի գնահատման և ապահովման պատասխանատուն ընդգրկված է Քոլեջի ներքին կառուցվածքային ստորաբաժանումում, որը կրթական բարեփոխումների, որակի գնահատման և ապահովման , ինքնավերլուծության, մասնագիտությունների լիցենզավորման ու հավատագրման գործընթացները պլանավորող և իրականացնող, համակարգող և վերահսկող կառույց է:

3. Կրթության որակի ապահովման պատասխանատուն անմիջականորեն ենթարկվում է քոլեջի տնօրենին:

4. Որակի ապահովման պատասխանատուն իր գործունեությունը իրականացնելիս ղեկավարվում է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Երեխաների իրավունքների մասին» , «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ,«Նախնական մասնագիտական/արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, Քոլեջի կանոնադրությամբ:

5.Քոլեջի դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ իրականացվում է հարցում արտաքին և ներքին շահակիցների շրջանում:

6.Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգի, «Կրթական ծրագրերի որակի գնահատման ընթացակարգ»-ի և որակի ապահման այլ ընթացակարգերի պահանջների հիման վրա և համարվում է Քոլեջի ուսանողների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և դասախոսական, վարչական անձնակազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի իրականացման ձև:

7. Որակի ապահովման կանոնակարգը, որակի ապահովման քաղաքականությունը, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգը, կրթական ծրագրերի որակի գնահատման ընթացակարգը և մնացած բոլոր

ընթացակարգերը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում Քոլեջի կառավարման խորհուրդը:

1.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1.1Որակի ապահովման պատասխանատուն ընդգրկված է Քոլեջի ներքին կառուցվածքային ստորաբաժանում:

1.2.Որակի պատասխանատուի պարտականությունները բխում են քոլեջի խնդիրներից և գործառույթներից:

1.3 Կրթության որակի ապահովման պատասխանատուն տվյալ պաշտոնին նշանակվում կամ ազատվում է տնօրենի առաջարկությամբ:

2.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Քոլեջի կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթային հենքի մշակում և պարբերական վերանայում:

2.2 Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունների ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման համար որակի ապահովման ընթացակարգերի, գործիքակազմի մշակում և պարբերական վերանայում:

2.3 Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների հետ սերտ համագործակցում:

2.4 Որակի ապաովման և Քոլեջի գործունեության բոլոր ոլորտներում լավագույն փորձի ուսումնասիրության և արդյունքների հիման վրա բարելավման առաջարկների ներկայացում:

2.5 Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, հաստատման մշտադիտարկման և պարբերական վերանայման, որակի ապահովման ընթացակարգերի մշակում :

2.6 Շահակիցների կարիքների գնահատման և հետադարձ կապի ապահովման գործիքակազմի մշակում և իրականացում:

2.7 Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և իրականացում :

2.8 Քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացի համակարգում :

3.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Որակի ապահովման պատասխանատուն իրավունք ունի՝

3.1 ծանոթանալ Քոլեջի տնօրենության որոշումների այն նախագծերին,որոնք վերաբերում են իր գործունեությանը

3.2 ներկայացնել առաջարկություններ՝ աշխատանքները բավարարելու նպատակով.

3.3 համագործակցել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, ստանալ այն փաստաթղթերը , տեղեկատվությունը , որոնք անհրաժեշտ են իր պաշտոնական պարտականությունները կատարելու համար.

3.4 հայտնել տնօրենությանը աշխատանքի ընթացքում ի հայտ եկած բոլոր թերությունների մասին և առաջարկներ ներկայացնել դրանք վերացնելու ուղղությամբ.